ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Վ. ՀՈԿՏԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

9-Ա

ք. Երևան 20 սեպտեմբեր 2013թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով. Է. Բաբայան (նախագահ), Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան, Ա. Սարգսյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի՝ քննարկեց Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի (այսուհետ՝ Դիմող) 2013 թվականի հուլիսի 26-ի Թի-13/41 դիմումը՝ Երևան քաղաքի ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձի բարձրացման հետ կապված մամուլում առկա հրապարակումներում Երևանի քաղաքապետի բիզնես-գործունեության, որոշ երթուղիներ Երևանի քաղաքապետին կամ նրա մերձավոր ազգականներին պատկանելու, Երևանի քաղաքապետի գույքի և եկամուտների աղբյուրների, շահերի բախման ռիսկերի, ներդրումները կառավարելիս պաշտոնական դիրքը և լիազորությունները օգտագործելու հնարավոր դեպքերի կապակցությամբ վարույթ հարուցելու վերաբերյալ:

Դիմումում հղում կատարելով hetq.am կայքում հրապարակված *«Երևանի ընտրություններ. առաջին դեմքերի ունեցվածքը»* և ilur.am կայքում հրապարակված *«Ինքնախոստովանություն. «Ես, Տարոն Մարգարյանս, ձեզնից գողացել եմ միլիոնավոր դոլարներ...»* հոդվածներին՝ Դիմողը մասնավորապես նշում է, որ մամուլում շրջանառվում են տարաբնույթ մեկնաբանություններ և կասկածներ՝ կապված Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի գույքի ու եկամուտների և դրանց ձեռքբերման աղբյուրի օրինականության վերաբերյալ, որոնք ծագել են Երևանի քաղաքապետի կողմից Կենտրոնական ընտրական

հանձնաժողով և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացրած գույքի և եկամուտների հայտարարագրերի համադրությունից:

Ի լրումն վերոնշյալին Դիմողը նաև նշում է, որ կապված ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձի բարձրացման հետ մամուլում նաև եղել են հրապարակումներ Երևանի քաղաքապետի բիզնես-գործունեության վերաբերյալ՝ մասնավորապես այն մասին, որ որոշ երթուղիներ սպասարկող կազմակերպություններ պատկանում են նրան և նրա մերձավոր ազգականներին:

Դիմողը խնդրել է Հանձնաժողովին հարուցել վարույթ՝ ստուգելու տվյալ հրապարակումներում նշված փաստերի իսկությունը և պարզել արդյո՞ք ներքաղաքային փոխադրավարձը բարձրացնելիս Երևանի քաղաքապետը գտնվել է շահերի բախման իրավիճակում կամ եղել է նման ռիսկ և արդյո՞ք ներդրումները կառավարելիս Երևանի քաղաքապետի կողմից չեն օգտագործվել պաշտոնեական դիրքը և լիազորությունները:

Հիմք ընդունելով Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի՝ 2013 թվականի հուլիսի 26-ի Թի-13/41 դիմումը և ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով՝

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը որոշում է.

1. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի՝ 2013 թվականի հուլիսի 26-ի Թի-13/41 դիմումի հիման վրա հարուցել վարույթ:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանին՝ սույն որոշումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ իր առարկությունները և բացատրությունները:

Հանձնաժողովի նախագահ ***Է. ԲԱԲԱՅԱՆ***

<u>Հավելված</u>
Բարձրաստիճան պաշտոնատար
անձանց էթիկայի հանձնաժողովի
..2013թ. թիվ 9-Ա որոշման

<u>Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն</u>

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Վ. ՀՈԿՏԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով Է. Բաբայան, Ա. Շուշյան, Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան, Ա. Սարգսյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի, քննարկեց Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի 2013 թվականի հուլիսի 26-ի Թի-13/41 դիմումը՝ ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձը բարձրացնելիս Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի շահերի բախման իրավիճակում գտնվելու, կամ նման ռիսկի առկայության, ներդրումները կառավարելիս պաշտոնեական դիրքը և լիազորությունները օգտագործելու, ինչպես նաև Երևանի քաղաքապետի կողմից Հանձնաժողովին ներկայացված գույքի և եկամուտների հայտարարագրերը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով (այսուհետ՝ ԿԸՀ) ներկայացված հայտարարգրի հետ համադրելու վերաբերյալ:

1. <u>Դիմումների առարկան</u>

1. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանը իր դիմումում մասնավորապես նշում է, որ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից գույքի և եկամուտների հայտարարագիրը որպես Երևանի ավագանու թեկնածու ԿԸՀ ներկայացնելուց հետո սկիզբ առան կասկածներ և տարաբնույթ մեկնաբանություններ մամուլում կապված քաղաքապետի գույքի և եկամուտների օրինականության վերաբերյալ: Մինչդեռ ըստ Հհանձնաժողովին ներկայացրած 2011թ. և 2012թ. գույքի և եկամուտների հայտարարագրի Տ. Մարգարյանը, որպես սեփականություն, չունի որևէ շարժական կամ անշարժ գույք կամ եկամտի այլ աղբյուր՝ աշխատավարձից բացի:

2. Կապված ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձի բարձրացման հետ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանը իր դիմումում մասնավորապես նշում է, որ մամուլում հաճախացել են հրապարակումները քաղքապետի բիզնես-գործունեության, մասնավորապես, այն մասին, որ որոշ երթուղիներ սպասարկող կազմակերպություններ պատկանում են Երևանի քաղաքապետին և նրա մերձավոր ազգականներին: Այս կապակցությամբ դիմումում հղում է կատարվում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետին, որը սահմանում է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձը պարտավոր է *«ձգտել կառավարել իր ներդրումներն այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվեն շահերի բախման իրավիճակները»:* Դիմումում հղում է կատարվում նաև նույն օրենքի 31-րդ հոդվածին, համաձայն որի՝ շահերի բախում առաջանալու դեպքում բարձրաստիճան պաշտոնատար անձը, պարտավոր է իր վերադաս անձին գրավոր տեղեկացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն՝ ներկայացնելով շահերի բախմանը վերաբերող կոնկրետ հանգամանքները: Բացի այդ բարձրաստիճան պաշտոնատար անձն իրավունք ունի բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից ստանալու պարզաբանում կոնկրետ իրավիճակում շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին:

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանը խնդրել է Հանձնաժողովին հարուցել վարույթ պարզելու. 1) մամուլի հարապարակումներում նշված փաստերի համապատասխանությունը իրականությանը, 2) ներքաղաքային փոխադրավարձը բարձրացնելիս քաղաքապետը գտնվել է արդյո՞ք շահերի բախման իրավիճակում կամ եղել է նման ռիսկ, և 3) ներդրումները կառավարելիս քաղաքապետի կողմից չեն օգտագործվել արդյո՞ք պաշտոնեական դիրքը և լիազորությունները:

4. Ռ. Նիկողոսյանը իր դիմումներում, հղում կատարելով *«Lragir.am»* կայքում հրապարակված *«ՀԴՄ կտրոնների բարեբեր մենաշնորհը»* հոդվածին, նշում է նաև, որ ՀԴՄ կտրոնների համար անհրաժեշտ թղթի վաճառքով զբաղվում է «Ալեքսերվ» ՍՊԸ-ն, որը նույնպես, համաձայն համառորեն և համատարած շրջող լուրերի, տնօրինվում է ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի կողմից: Դիմողի կարծիքով այս դեպքում ևս ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը օգտագործում է պետական պաշտոնը անձնական նպատակների և շահերի համար: Ռ. Նիկողոսյանը իր դիմումներով պահանջում է Հանձնաժողովին նշված փաստերի հիման վրա հարուցել վարույթ:

2. <u>Հանձնաժողովի ուսումնասիրությունները</u>

5. Հանձնաժողովը իր 18.01.2013թ Ե-003 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից պահանջել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում «Ապեյրոն», «Մեգաֆուդ», «Մեգասպորտ», «Մեգամոթորս», «Յուքոմ», «Խրոնոգրաֆ», «Չիմեգ», «Սանտա ֆե», «Գալաքսի» հացի գործարան և «Գալաքսի» սուպերմարկետ, «Ամասիայի կաթի գործարան», «Այյանս» մաքսային տերմինալ, «Հագուստի աշխարհ», «Ալեքսերվ» անվանումներով ընկերությունների գրանցման, ինչպես նաև, նշված ընկերությունների գրանցված լինելու պարագայում դրանց կազմակերպաիրավական տեսակների, գտնվելու վայրի, մասնակիցների կազմի և տնօրենների վերաբերյալ տեղեկատվություն:

6. Նշված պահանջին ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը 24.01.2013թ. թիվ 3-2/0107-13 գրությամբ տեղեկացրել է, որ պետական ռեգիստրում «Սանտա ֆե», «Գալաքսի» հացի գործարան, «Գալաքսի» սուպերմարկետ և «Ամասիայի կաթի գործարան» անվանումներով ընկերություններ գրանցված չեն: «Այյանս» մաքսային տերմինալ անվանումով ընկերություն պետական ռեգիստրում նույնպես գրանցված չէ, սակայն կա գրանցված «Այյանս տերմինալ» ՍՊԸ, որը միացման ճանապարհով վերակազմավորվել է «Տրանս-Այյանս» ՍՊԸ-ի: «Ապեյրոն», «Մեգաֆուդ», «Մեգասպորտ», «Մեգամոթորս», «Յուքոմ», «Խրոնոգրաֆ», «Չիմեգ», «Հագուստի աշխարհ», «Ալեքսերվ» և «Տրանս-Այյանս» ընկերությունների մասով ներկայացվել է պահանջվող տեղեկատվություն՝ նշված ընկերությունների կազմակերպա-իրավական տեսակների, գտնվելու վայրերի, մասնակիցների կազմի և տնօրենների վերաբերյալ:

7. Դրա հետ մեկտեղ, Հանձնաժողովը իր 05.02.2013թ Ե-30 գրությամբ «Գնումների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ից պահանջել է տրամադրել տեղեկատվություն, «Ապեյրոն», «Մեգաֆուդ», «Մեգասպորտ», «Մեգամոթորս», «Յուքոմ», «Խրոնոգրաֆ», «Չիմեգ», «Հագուստի աշխարհ», «Ալեքսերվ» և «Տրանս-Այյանս» ընկերությունների հետ ՊԵԿ-ի կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման պայմանագրերի առկայության վերաբերյալ, որոնք կնքվել են 2011 թվականի հունվարի 1-ից հետո, ինչպես նաև նախկինում կնքված նմանատիպ պայմանագրերը, որոնց գործողությունը շարունակվել է 2012 թվականի հունվարի մեկից հետո:

8. Ի պատասխան այս գրության «Գնումների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը 13.02.2013թ թիվ 05/022-270 գրությամբ տեղեկացրել է, որ նշված ընկերությունների հետ 2011 թվականի հունվարի 1-ից հետո պայմանագրեր չեն կնքվել: Միաժամանակ տեղեկացվել է, որ առկա է ՀՀ պետական եկամուտների

կոմիտեի կարիքների համար 23.12.2010 կնքված պայմանագիր «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի և «Յուքոմ» ՍՊԸ-ի միջև:

3. Վարույթի հարուցումը

9. Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի՝ էթիկայի հանձնաժողովը վարույթ է հարուցում սեփական նախաձեռնությամբ: Էթիկայի հանձնաժողովի համար սեփական նախաձեռնությամբ վարույթ հարուցելու հիմք կարող են հանդիսանալ ինչպես որևէ անձի դիմումի հիման վրա, այնպես էլ Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ անցկացված ուսումնասիրությունները, եթե դրանց արդյունքում ի հայտ են գալիս որևէ բարձրաստիճան պաշտոնատար անձի շահերի բախման իրավիճակում գտնվելու առերևույթ հիմքեր:

10. Սույն վարույթի հարուցման համար բարձրաստիճան պաշտոնատար անձի շահերի բախման իրավիճակում գտնվելու առերևույթ հիմքեր են հանդիսացել դիմումներում բերված այն պնդումները, որ նշված ընկերությունները պատկանում են ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանին կամ նրա հետ փոխկապակցված անձանց և այդ ընկերությունները ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման պայմանագրեր ունեն ՊԵԿ-ի հետ:

11. Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ևս ի հայտ են եկել տվյալներ կապված դիմումներում նշված ընկերությունների մի մասի մասնակիցների կազմի, ինչպես նաև «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ առկա պայմանագրի հետ, որոնք առերևույթ հիմքեր կարող են հանդիսանալ բարձրաստիճան պաշտոնատար անձի շահերի բախման իրավիճակում գտնվելու համար:

12. Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը 2013 թվականի ապրիլի 10-ի 6-Ա որոշմամբ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի և ՀՀ քաղաքացի Ռ. Նիկողոսյանի դիմումների հիման վրա հարուցել է վարույթ:

13. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը տեղեկացրել էր Հանձնաժողովին, որ պետական ռեգիստրում «Սանտա ֆե»,«Գալաքսի» հացի գործարան, «Գալաքսի» սուպերմարկետ և «Ամասիայի կաթի գործարան» անվանումներով ընկերություններ գրանցված չեն: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հանձնաժողովը որոշել է, որ դիմումներում նշված փաստերը քննարկման են ենթակա միայն «Ալեքսերվ», «Ապեյրոն», «Մեգաֆուդ»,

«Մեգասպորտ», «Մեգամոթորս», «Յուքոմ», «Խրոնոգրաֆ», «Չիմեգ», «Հագուստի աշխարհ», «Տրանս-Ալյանս» ընկերությունների մասով:

14. Հանձնաժողովը 2013 թվականի ապրիլի 13-ի Ե-142 գրությամբ տեղեկացրել է ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանին հարուցված վարույթի վերաբերյալ և առաջարկել է նշված գրությունը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել առարկություններ և բացատրություններ դիմումներում ներկայացված հարցերի վերաբերյալ:

4. <u>Իրավական հիմքերը</u>

15. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից: Օրենքի ընդունումը պայմանավորված էր երկրում գործող հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացման, արդար կառավարման համակարգի ներդրման, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործունեությունը հասարակության համար առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու անհրաժեշտության գիտակցմամբ: Այս առումով կարևոր նշանակություն ունի էթիկայի կանոնների խախտումների և շահերի բախման իրավիճակների ուսումնասիրության մեխանիզմի ներդրումը:

16. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը սահմանում է.

« շահերի բախում՝ իրավիճակ, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել.»,

իսկ օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է թե ինչ է նշանակում անձնական շահերով առաջնորդվելը.

«1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է բարձրաստիճան պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.
4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:
3. Ըստ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե տվյալ գործողությունը կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն և անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա այնպես, որ ողջամտորեն չի կարող մեկնաբանվել որպես բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:»

17. Այսինքն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը շահերի բախման իրավիճակ դիտարկում է 4 միաժամանակյա պարտադիր պայմանների առկայություն, դրանք են՝

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձը պետք է գործի <u>իր լիազորությունների շրջանակում</u>,

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձը իր լիազորությունների շրջանակում պետք է <u>գործողություն կատարի կամ որոշում ընդունի</u>,

3. Այդ որոշումը կամ գործողությունը պետք է լինի <u>օրինական</u>,

4. Այդ որոշումը կամ գործողությունը պետք է <u>հանգեցնի իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը:</u>

18. Այսպիսով՝ օրենքով սահմանված վերը նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում դադարում ենք գործ ունենալ շահերի բախման իրավիճակի հետ: Այն դեպքում երբ պաշտոնատար անձը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից, մենք գործ կունենանք ոչ թե շահերի բախման, այլ պաշտոնական լիազորություններն անցնելու հետ, ինչը քրեորեն հետապնդելի արարք է: Նույն կերպ, օրենսդրությունը պարտադրում է, որ այդ գործողությունները կամ որոշումները պետք է լինեն օրինական, այսինքն ոչ միայն բխեն պաշտոնատար անձի լիազորություններից, այլ՝ օրինական լինեն և ձևով և բովանդակությամբ: Հետևաբար, եթե պաշտոնատար անձը իր լիազորությունների շրջանակում կատարի գործողություններ կամ ընդունի որոշումներ, որոնք անօրինական են, ապա, կրկին այստեղ առկա կլինի ոչ թե շահերի բախման իրավիճակ, այլ քրեական հանցակազմ:

19. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը սահմանում է բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակը.

«բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք:

Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները.»

5. <u>ՊԵԿ նախագահի առարկությունները և բացատրությունները</u>

20. 2013 թվականի ապրիլի 23-ի թիվ 4994/11-1 գրությամբ Հանձնաժողովը ստացել է ՊԵԿ նախագահի պարզաբանումները, որտեղ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը նշում է, որ իր հետ փոխկապակցված անձինք որպես մասնակից կամ բաժնետեր հանդես են գալիս Հանձնաժողովի գրության մեջ թվարկված միայն հետևյալ ընկերություններում.

1. «Ապեյրոն» - Խաչատրյան Գուրգեն- զավակ-50 տոկոս, Խաչատրյան Արտյոմ –զավակ – 50 տոկոս,
2. «Մեգաֆուդ» - Խաչատրյան Արամ –հորեղբոր զավակ – 100 տոկոս,
3. «Մեգասպորտ»- Նազարյան Արմեն –հորաքրոջ զավակ – 100 տոկոս,
4. «Մեգամոթորս» - Խաչատրյան Գուրգեն –զավակ-50 տոկոս, Խաչատրյան Արտյոմ –զավակ – 50 տոկոս,
5. «Յուքոմ» - Խաչատրյան Արամ –հորեղբոր զավակ – 41 տոկոս,
6. «Խրոնոգրաֆ» - Խաչատրյան Հայկ –հորեղբոր զավակ – 100 տոկոս:

21. Ինչ վերաբերում է «Չիմեգ», «Հագուստի աշխարհ», «Ալեքսերվ» և «Տրանս Ալյանս» ընկերություններին, ապա ՊԵԿ նախագահը պաշտոնապես հայտարարել է, որ ինքը կամ նրա հետ փոխկապակցված որևէ անձ որևէ մասնակցություն կամ առնչություն (հիմնադրման, մասնակցության) չունեն նշված ընկերությունների հետ:

22. ՊԵԿ նախագահը միաժամանակ պարզաբանել է, որ «Յուքոմ» ընկերության հետ կնքված՝ «Տվյալների փոխանակման, տեղեկատվական, գերատեսչական համակարգչային գլոբալ ցանցի սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման» 23.12.2010թ., «Պետության կարիքների համար «Ինտերնետ կապի սպասարկման, արբանյակային կապուղիների վարձակալության» ծառայությունների ձեռքբերման գնման» 23.12.2010թ., «Տվյալների փոխանակման, տեղեկատվական, գերատեսչական համակարգչային գլոբալ ցանցի սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման» 10.10.2011թ., «ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում գործող կորպորատիվ ցանցի և համացանցի սպասարկման ծառայությունների, տեղեկատվական արբանյակային կապուղիների վարձակալության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնման» 10.01.2012թ. պայմանագրերը կնքվել են ՊԵԿ աշխատակազմի

ղեկավարի կողմից, քանի որ նշված լիազորությունը «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով վերապահված է հիմնարկի աշխատակազմի ղեկավարին: ՊԵԿ նախագահը նաև նշել է, որ նշված պայմանագրերը կնքվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան: Նույն օրենքի 5-րդ հոդվածով քննարկվող շահերի բախման հնարավոր ռիսկերի առումով որևէ սահմանափակում նախատեսված չէ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների համար և հայտարարել է, որ որպես ՊԵԿ նախագահ, չի առաջնորդվել և չի առաջնորդվում իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով, իր կողմից ղեկավարած մարմնի գործողությունները կամ որոշումներն ունեն համընդհանուր կիրառելիություն և անդրադառնում են անձանց լայն շրջանակի վրա և չեն կարող մեկնաբանվել որպես իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով առաջնորդվել: ՊԵԿ նախագահը նաև նշել է, որ իր կողմից որևէ մասնակի որոշում կամ վարչարարություն վերոնշյալ կազմակերպությունների կապակցությամբ չի ընդունվել կամ կատարվել:

6. <u>Հանձնաժողովի եզրակացությունը</u>

23. Հանձնաժողովը գտնում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի հարուցման համար հիմք են հանդիսացել Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի և ՀՀ քաղաքացի Ռ. Նիկողոսյանի դիմումները, ապա անհրաժեշտ է նախ պատասխանել դիմումներում առաջադրված կոնկրետ հարցերին: Դիմումներում ըստ էության առաջադրվել է երեք հարց.

1. Արդյո՞ք դիմումներում նշված հրապարակումներում բերված փաստերը համապատասխանում են իրականությանը:
2. Եթե առաջին հարցի պատասխանը դրական է, ապա առկա է արդյո՞ք շահերի բախում կամ նման ռիսկ պաշտոնավարման և միաժամանակ ձեռնարկատիրությամբ զբաղվելու դեպքում:
3. Արդյո՞ք ներդրումները կառավարելիս չեն օգտագործվել պաշտոնական դիրքը և լիազորությունները:

24. Առաջին հարցի կապակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ նշված հրապարակումներում բերված փաստերը մասամբ են համապատասխանում իրականությանը: Մասնավորապես՝ ինչպես վերը նշվեց ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը տեղեկացրել էր Հանձնաժողովին, որ պետական ռեգիստրում «Սանտա ֆե», «Գալաքսի» հացի գործարան, «Գալաքսի» սուպերմարկետ և «Ամասիայի կաթի գործարան» անվանումներով

ընկերություններ գրանցված չեն: Հետևաբար Հանձնաժողովը չի կարող քննարկել դրանց ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանին կամ նրա հետ փոխկապակցված անձանց պատկանելու հարցը:

25. Ինչ վերաբերում է «Ալեքսերվ», «Ապեյրոն», «Մեգաֆուդ», «Մեգասպորտ», «Մեգամոթորս», «Յուքոմ», «Խրոնոգրաֆ», «Չիմեգ», «Հագուստի աշխարհ», «Տրանս-Ալյանս» ընկերություններին՝ ապա Հանձնաժողովը փաստում է, որ նշված ցանկից «Ալեքսերվ», «Չիմեգ», «Հագուստի աշխարհ» և «Տրանս-Ալյանս» ընկերությունների մասով առկա է ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի պաշտոնական հայտարարությունը, որ ինքը կամ նրա հետ փոխկապակցված որևէ անձ որևէ առնչություն (հիմնադրման, մասնակցության)չունեն նշված ընկերությունների հետ: Հակառակը ապացուցող փաստեր առկա չեն Հանձնաժողովին հասցեագրված դիմումներում: Հանձնաժողովի կատարած ուսումնասիրությունները նույնպես նման փաստեր չեն բացահայտել: Հետևաբար՝ Հանձնաժողովը չի կարող քննարկման առարկա դարձնել նշված կազմակերպությունների կապակցությամբ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի շահերի բախման իրավիճակում գտնվելու հարցը, քանի որ դրանք չեն պատկանում ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանին կամ նրա հետ փոխկապակցված որևէ անձի:

26. Մնացյալ ընկերությունների մասով՝ «Ապեյրոն», «Մեգաֆուդ», «Մեգասպորտ», «Մեգամոթորս», «Յուքոմ», «Խրոնոգրաֆ»,Հանձնաժողովը փաստում է, որ դրանց մասնակիցների մեջ առկա են ինչպես ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի հետ փոխկապակցված անձինք այնպես էլ՝ նրա հետ ազգակցական կապի մեջ գտնվող անձինք: Այս կապակցությամբ Հանձնաժողովը փաստում է, որ համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 16-րդ կետի, բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակը ներառում է բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները:

27. Օրենքի նշված դրույթի տրամաբանությամբ բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք են՝ նրա և նրա ամուսնու զավակները, ծնողները, քույրերը, եղբայրները (արյունակցական կապի 1-ին աստիճան), ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու զավակների զավակները (թոռները), ծնողների ծնողները (պապերը և տատերը), ծնողների քույրերը և եղբայրները (հորեղբայրները, մորեղբայրները,

հորաքույրները և մորաքույրները), քույրերի և եղբայրների զավակները (արյունակցական կապի 2-րդ աստիճան):

28. Հանձնաժողովին ներկայացված պարզաբանումների մեջ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը նշել է, որ «Մեգաֆուդ» ընկերության 100 տոկոս սեփականատեր է հանդիսանում Արամ Խաչատրյանը, ով նրա հորեղբոր զավակն է, «Մեգասպորտ» ընկերության 100 տոկոս սեփականատեր է հանդիսանում Արմեն Նազարյանը ով նրա հորաքրոջ զավակն է, «Յուքոմ» ընկերության 41 տոկոսի սեփականատեր է հանդիսանում Արամ Խաչատրյանը, ով նրա հորեղբոր զավակն է, «Խրոնոգրաֆ» ընկերության 100 տոկոս սեփականատերն է հանդիսանում Հայկ Խաչատրյանը ով նրա հորեղբոր զավակն է:

29. Նշված փաստերը հաշվի առնելով Հանձնաժողովը փաստում է, որ չի կարող ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի կողմից շահերի բախման իրավիճակում գտնվելու հարցը քննարկել նշված ընկերությունների մասով, քանի որ դրանց մասնակիցները թեև գտնվում են նրա հետ ազգակցական կապի մեջ, սակայն համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 16-րդ կետի չեն հանդիսանում նրա հետ փոխկապակցված անձինք, քանի որ չեն գտնվում նրա հետ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ:

30. Մնացած երկու ընկերությունների առնչությամբ, այն է՝ «Ապեյրոն»և «Մեգամոթորս» Հանձնաժողովը փաստում է, որ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը նշել է, որ երկու ընկերություններն էլ հավասար 50 տոկոս մասնաբաժիններով պատկանում են իր զավակներ Գուրգեն և Արտյոմ Խաչատրյաններին:

31. **Այսպիսով՝ ի պատասխան առաջին հարցի, «արդյո՞ք դիմումներում նշված հրապարակումներում բերված փաստերը համապատասխանում են իրականությանը»՝ Հանձնաժողովը փաստում է, որ դիմումներում նշված փաստերից իրականությանը համապատասխանում է այն, որ միայն «Ապեյրոն» և «Մեգամոթորս» ընկերություններն են, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով պատկանում են ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի հետ փոխկապակցված անձանց, այն է՝ նրա զավակներին:**

32. Երկրորդ հարցի կապակցությամբ՝ «առկա է արդյո՞ք շահերի բախում կամ նման ռիսկ պաշտոնավարման և միաժամանակ ձեռնարկատիրությամբ զբաղվելու դեպքում» Հանձնաժողովը փաստում է, որ նշված ընկերություններից որևէ մեկում ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը անձամբ ներառված չէ որպես մասնակից և հետևաբար «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով անձամբ չի զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ:

33. Ինչ վերաբերում է ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունների՝ «Ապեյրոն» և «Մեգամոթորս», առնչությամբ շահերի բախման իրավիճակում գտնվելուն՝ ապա Հանձնաժողովը փաստում է, որ«Գնումների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը ի պատասխան Հանձնաժողովի հարցմանը պատասխանել է, որ նշված ընկերությունների հետ չկան կնքված պայմանագրեր:

34. Միաժամանակ՝ իր գրության մեջ ՊԵԿ նախագահը պաշտոնապես հայտարարել է, որ որպես ՊԵԿ նախագահ, չի առաջնորդվել և չի առաջնորդվում իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով, իր կողմից ղեկավարած մարմնի գործողությունները կամ որոշումներն ունեն համընդհանուր կիրառելիություն և անդրադառնում են անձանց լայն շրջանակի վրա: ՊԵԿ նախագահը նաև նշել է, որ որևէ մասնակի որոշում կամ վարչարարություն վերոնշյալ կազմակերպությունների կապակցությամբ չի ընդունվել կամ կատարվել:

35. **Այսպիսով՝ որպես երկրորդ հարցի պատասխան Հանձնաժողովը փաստում է, որ ինչպես Հանձնաժողովին ներկայացված դիմումներում, այնպես էլ Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ չեն եկել փաստեր, որ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը իր լիազորությունների շրջանակում կատարել է այնպիսի գործողություն կամ ընդունել է այնպիսի որոշում, որը ինքնին օրինական լինելով հանգեցրել է կամ նպաստել է կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել կամ նպաստել «Ապեյրոն» և «Մեգամոթորս» ընկերությունների գույքային կամ իրավական դրության բարելավմանը:**

36. Երրորդ հարցին պատասխանելու անհրաժեշտությունը վերանում է, քանի որ նախորդ հարցերի քննարկումը արդեն իսկ պարունակում է դրա պատասխանը:

37. Դիմումներում բարձրացված հարցերին անդրադառնալուց հետո Հանձնաժողովը այնուամենայնիվ ցանկանում է սեփական նախաձեռնությամբ անդրադառնալ շահերի բախման իրավիճակում բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործողությունների կարևոր հարցին:«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը սահմանում է.

> *«1. Շահերի բախում առաջանալու դեպքում բարձրաստիճան պաշտոնատար անձը, բացառությամբ պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների, ինչպես նաև սույն օրենքի իմաստով վերադաս չունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձի, պարտավոր է իր վերադաս անձին գրավոր ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն՝ ներկայացնելով շահերի բախմանը վերաբերող կոնկրետ հանգամանքները: Մինչև վերադաս անձից գրավոր համաձայնություն ստանալը*

բարձրաստիճան պաշտոնատար անձն իրավունք չունի տվյալ հարցի վերաբերյալ գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու: Վերադաս անձն իրավունք ունի տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարելու այլ պաշտոնատար անձի, եթե դա օրենքով արգելված չէ:

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձն իրավունք ունի բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից ստանալու պարզաբանում կոնկրետ իրավիճակում շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին: Եթե ներկայացված տվյալները եղել են ամբողջական, ապա բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը շահերի բախման բացակայության մասին հիմք է վարույթը կարճելու համար, եթե դա հարուցվի:»

38. Այսինքն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար սահմանում է հստակ պարտավորություն իր վերադաս անձին գրավոր ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն՝ ներկայացնելով շահերի բախմանը վերաբերող կոնկրետ հանգամանքները: Օրենսդիրը նաև հնարավորություն է սահմանում այն բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար ովքեր վստահ չեն շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին՝ դիմել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին նման հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության կամ դրա բացակայության վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: Ընդ որում եթե ներկայացված տվյալները եղել են ամբողջական, ապա Հանձնաժողովի եզրակացությունը շահերի բախման բացակայության մասին հիմք է վարույթը կարճելու համար, եթե դա հարուցվել:

39. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, շահերի բախման իրավիճակները բացառելու և հանրության վստահությունը հանրային ինստիտուտների նկատմամբ բարձրացնելու առումով կարևոր է, որպեսզի բարձրաստիճան պաշտոնատար անձինք բոլոր այն դեպքերում,երբ իրենց լիազորությունների շրջանակում որևէ գործողություն պետք է կատարեն կամ որոշում ընդունեն կապված իրենց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ ընկերությունների առընչությամբ, նախապես Էթիկայի հանձնաժողովից ստանան պարզաբանում շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին:

40. Այլապես՝ եթե բարձրաստիճան պաշտոնատար անձը հանդես չգա շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ և հետագայում բացահայտվի, որ նա գտնվել է շահերի բախման իրավիճակում, ապա առաջ կգա նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից էթիկայի կանոնների խախտում: Էթիկայի կանոնների խախտումը կդրսևորվի այն հանգամանքով, որ «Հանրային

ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները, որոնք ներառում են նաև *«հարգել օրենքը և ենթարկվել օրենքին»* կանոնը: Իսկ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար հստակ պարտավորություն է սահմանում հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ: Կա նման իրավիճակ թե ոչ, կարող է պարզաբանել միայն էթիկայի հանձնաժողովը:

41. Մասնավորապես՝ Հանձնաժողովը գտնում է, որ արդեն իսկ հաստատված փաստ է, որ «Ապեյրոն» և «Մեգամոթորս»ընկերությունները պատկանում են ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի հետ փոխկապակցված անձանց: Հետևաբար՝ ցանկացած այն դեպքում երբ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը իր լիազորությունների շրջանակում պետք է կատարի այնպիսի գործողություն կամ ընդունի այնպիսի որոշում, որը ինքնին օրինական լինելով կարող է հանգեցնել կամ նպաստել կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել «Ապեյրոն» և «Մեգամոթորս» ընկերությունների գույքային կամ իրավական դրության բարելավմանը, անհրաժեշտ է, որպեսզի ՊԵԿ նախագահը նախապես ստանա էթիկայի հանձնաժողովի պարզաբանումը շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության վերաբերյալ:

42. Հանձնաժողովը գտնում է, որ նախապես նման պարզաբանումներ ստանալու և դրանց հիման վրա նախապես հայտարարությամբ հանդես գալու գործելաոճը կարող է էական ազդեցություն ունենալ հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացման վրա:

43. Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը եզրակացնում է՝

1. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի և ՀՀ քաղաքացի Ռ. Նիկողոսյանի դիմումներում և ներկայացված հրապարակումներում նշված փաստերի ուսումնասիրությունը հիմք չի տալիս Հանձնաժողովին եզրակացնելու, որ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը նշված ընկերությունների առնչությամբ գտնվել է շահերի բախման իրավիճակում:

Ցանկացած այն դեպքում երբ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանը իր լիազորությունների շրջանակում պետք է կատարի այնպիսի գործողություն կամ ընդունի այնպիսի որոշում, որը ինքնին օրինական լինելով կարող է հանգեցնել կամ նպաստել կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել «Ապեյրոն» և «Մեգամոթորս» ընկերությունների գույքային կամ իրավական դրության բարելավմանը, անհրաժեշտ է, որպեսզի ՊԵԿ նախագահը նախապես հանդես գա հայտարարարությամբ կամ ստանա էթիկայի հանձնաժողովի պարզաբանումը շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության վերաբեր